

Խ. ԻՍԱԿԱԿՅԱՆ

ԱՌԱՎՆԵՐ

ՀԱՅՊԵՏՀՐԱՏ
1946

891-99

9092

1-75

Handwritten note (24)

Uncl. tp.

30

1111

891.99

8-75

ԱՊ. ԻՍԽԱԿՅԱՆ

ՍՏՈՒԳԱԾ Է 1962

Ա Ռ Ա Կ Ն Ե Ր

$\frac{A}{II} \frac{28074}{2022}$



ԵՐԵՎԱՆ

ՀԱՅԿԱԳՐԱԴԱՐԱՆ

1946

ԲԱԳՅԱՆ ԷՍԺԸ

Քաղցած հաժը երազ տեսավ,
երազի մեջ—կոխեկ անբաժ:
Եվ կառուցը՝ ոգևորված,

Զարկեց աժգին

Մեծ կոխեկին...

Բայց բերեք անքից դարձնեց հանկարծ,

Տեսավ՝ փոխան կոխեկհատին,

Կառուցն, ալմոյ,

Առեւ է չոր թառի փայտին...

1932—Փարիզ

ՄՈԼԼԱՆ ՌԻ ՄԱՆՈՒԿՆԵՐԸ

Մոլլան ելավ կեսօրվա դեմ
Բարձր ու ոլոր մինարեն.
Նեցուկ տված ձեռքն ականջին՝
Աղոթքն ուղղեց արարչին:

Հետո հենվեց շրջափակին,
Նայեց ներքև քաղաքին.
— «Պահ, պահ, մարդիկ ի՞նչքան փոքր են,
Ոտներին տակ հովեր են»:

Սազում էին ու վազվըզում
Մանուկները պարտիզում.
— «Հեյ, մինարի ծայրին, տղեք,
Ծիտ է նստել, նայեցեք...»

ՍՈՍՏԱՆԵՆ ԵՎ ԻՐ ԱՂՋԻԿՆԵՐԸ

Սառանան ուներ երեք հատ աղջիկ -
Նաև մի աղջիկ
Զվարթ, գեղեցիկ:
Հասել էր նրանց մարդու գնալու
ժամանակն արդեն:
Եվ հայր սառանան
Երեք աղջկան անվանեց «Գոռոզ»՝
Տալով կնության իշխանավորի:
Երկրորդ աղջկան անվանեց «Ագահ»՝
Տալով կնության վաճառականի:
Երրորդ աղջկան անվանեց «Նախանձ»՝
Տալով կնության արվեստագետի:
Իսկ գեղեցիկուհուն
«Սեր» կոչեց հայրը
Եվ տվեց նրան
Ամբողջ աշխարհը:

1945 - Երևան

Վայրի աղափնին՝ կուրծքը վերաժող՝
 Հնկել էր մենակ ողբյուրի եզրին,
 Ծորում էր շիթ-շիթ արյունը բոսոր,
 Մեռնում էր, աչքը՝ ջրի երազին:

Քնքուշ պարիկը տեսավ դալիանար
 Մեռնող աղափնուն և խոսեց այսպես.
 — Տուր ինձ այն, ինչոր թանգ է քեզ համար
 Էն թանկագինը, կյանք տամ իսկույն քեզ:

Մեռնող աղափնին խորհում էր ինքնին.
 «Էն թանկագինը՝ կյանքն է, անպատճառ,
 Ախ, ծաղրում է ինձ ողբյուրի ոգին»:
 — Էհ, լավ, թող լինի, տուր և նորից առ:

Պարիկը ցողեր սրսկեց վերքին,
 Աղափնին բացեց աչքերը ոռկի,
 Ու թեին տալով ծափեց խնդադին.
 — Ե՞րբ կուզես կյանքըս, նազելի սգի:

— Թեեքդ կուզեմ, կյանքդ քեզ լինի:
 — Թեեք՞ս... Խնչպես, ոհ, երբեք, երբեք,
 Առանց թախչի կյանքը դին չունի.
 Կյանքըս առ — թաչունն ասաց սրտաբեկ:

— Թեքը, զերեկին, տառա ու վաշրի
Թեքը ու ասա սարսիկ աշխարհին,
Թե ինչն է Թանգը հյանքից տվելի...
Ասաց Զքերի լուսեղեն սղին:

1923 - Վեհապեկ

ԱՐՁՆ ՈՒ ՓԶԸ

Ինչպես եղավ, որ մի անգամ
Արջն ու օձը դարձան ընկեր,
Ընկեր դարձան ու բարեկամ:

— «Մեկըս քնի,
Մեկըս հսկե,
Իրար շահենք
Իրար պահենք,
Ընկերովի կյանք ժայելենք»:

Այսպես առին, երգովեցին,
Իրար աշնիով խոսք տըվեցին
Օձը՝ արջին, արջը՝ օձին:

Անցավ այս կերպ մի ժամանակ:

Եվ շարունակ
Երկու ընկեր սիրով, սրտով
Նստան-կան ու քուն մտան
Կարգով, հերթով:

Սակայն օձի սողքը բեկբեկ
Դուր չէր գալիս արջին երբեք:

Օրվա մեկը արջը ժայռին
Թիկն էր տվել արեկողի,
Հանկարծ օձը՝ սլոր-մոլոր

Նկավ, ասես, գաղտագողի:
Վախ ու կասկածն առավ արջին,
Նկավ կանգնեց նստած տեղում:
— «Էս ծուռ ու մուռ գնացողին,
Ընկեր լինի թե կաթնախպեր,
Ձէ, չեմ յիրուժ, ես չեմ ուզում»:
Գոռաց աշտպես և թաթն ուժգին
Դըրեց, սեղմեց օձի գլխին
Ու մյուտ թաթը օձի մարմնով
Մինչև պոչը քաշեց թափով:
Ապա մոտիկ հոռող գետին
Հանձնեց օձի անկենդան դին:
Եվ նախելով ջրերի հետ
Նետի նման սուրող օձին՝
Գոհ մըթմըթաց բեխերի տակ:
— «Ա՛յ, Ը՛նկերը էսպես շիտակ
Պիտի լինի,
Դեհ, շիտ-շիտակ գընա հիմի»:

1927 — Երևան

ԹԱԳԱՎՈՐԻՑ ՓԱԽՉՈՂԸ

Թագավորը այցի ելավ
Իր հարկատու,
Գահին հլու
Գավառներին, քաղաքներին
Մոտ ու հեռու:

Ճոխ առպետներ—հետևորդներ՝
Հաղած-կապած զենք ու ասպար,
Հեծած ընտիր նըժույզ ձիեր՝
Արծաթասանձ ու ռոկեմար:

Երբ ամբոխի ցնծության տակ
Թագավորը շքախմբով
Մի քաղաք էր մի օր մտնում,
Այն մյուս դռնից ելավ ճեպով
Մի խոնարհ մարդ՝ վախը սրտում:
Եվ վազում էր, փախչում էր պինդ՝
Հոգին բլուրի մեջ հավաքած,
Հալածական երեի պես,
Կածաններով, շավիղներով,
Անտառներով խոր ու անտես:

Մի մարդ կանգնեց նրա առաջ.
—Է՛յ դու, կեցիր, մարդը ասաց,

Դու սճիր ես գործել, գիտեմ,
Որ փախչում ես գլուխդ տուած:
— Ես մի արդար անմեղ մարդ եմ,
Հացս եմ կերել իմ քրտինքով,
Բայց փախչում եմ թագավորից,
Որ փառահեղ հանդեսներով
Այցի եկավ մեր քաղաքին:
Հասկացիր ինձ,
Եղբայր անգին,
Նըրա ուժը՝ իմ ուժից շատ,
Նըրա խելքը՝ իմ խելքից քիչ,
Է՛հ, ի՞նչ լինի, ի՞նչ չը լինի,
Զորավորից
Ինչքան հեռու, այնքան բարի:

Եվ նա նորից
Վազեց, սուրաց
Հետապնդված երեխ պես
Կածաններով, շավիղներով,
Անտառներով խոր ու անտես...
1935— Փարիզ

ՄԻ ՀԱՐՑՈՒՄ

Մի քահանա կիրակւորին
Քարոզ խոսեց իրեն հօտին—
«Աստված փռել է թե ցամաք թե ծով
Իբրև ճոխ սեղան առատ բերքերով,
Որ այսպես իրեն
Էականերն ամեն՝
Մարդ թե անասուն,
Ձկներ ու թռչուն,
Ուտեն, լիանան
Եվ իրեն փառք տան...»

Ժողովրդի միջից հանկարծ
Քահանային տրվեց մի հարց.—
—«Տեր հայր, չգիտեմ,
Խնդրում եմ պարզեմ,
Այն կեր գնացող էակաները խեղճ,
Տկար կամ չնչին,
Պէտք է որ նույնպես
Փառք տան արարչին...»

1923—Վենետիկ

ՄԱՐԴՆ ՈՒ ՏԱՐԵՐԲԸ

Փոթորիկ էր ծովի վրա:
Ալիքները շաչում էին
Եվ լեռնանում փրփրադեղ:
Եվ փլվելով իրար վրա՝
Իջնում էին մռայլ անդունդ:

Եվ գունդագունդ
Քոծոռ ամպեր կայծակնալից՝
Քուծում էին լսու երկնքից
Եվ որոտում որոտադին:

Նավակի մեջ մի խեղճ ձկնորս,
Օրհասական թռչուքոհում,
Անիծում էր իր բախտը չար,
Որ հատկապես իրեն համար
Սառնվել են տարերքն իրար:

1933—Փարիզ

ՎԱՐԱՋՆ ՈՒ ԱՂՎԵՍԸ

Վարադը ժեռուտ քարերի վըբա
Անխոնջ եռանդով
Սրբում էր մեկ մեկ ժանիքներն իրա:
Հեգնող ժպիտով
Ազվեաք նրան հարց արավ, ասաց.
— «Ով կարիճ եղբայր,
Ոչ կազի լուր կա, և ոչ էլ կասկած,
Ի՞նչ ես վայրասլար
Մով-քրտինք մտել ու քեզ չարչարում»:
Իսկ վարադն այսպես պատասխան տվա վ.
— «Ամբողջ աշխարհում
Պորամանկ, խելոք
Հանել ես համբավ,
Բայց խելքըդ, իբոք,
Հավնոցից հեռու չի անցնում բնավ:
Զինվորը սլետի
Խաղաղության մեջ և ոչ թե մարտի
Զենքերը սրե, և պատրաստ ու կազմ
Աշալուրջ լինի:
Գիտցիր, որ ժանգն է ծնել պատերազմ.
Սրբած թրի դեմ դուրս գալ ճակատի
Թշնամին նվազ ախորժակ ունի:
1922 — Վենետիկ

ԷՇՆ ՈՒ ԳՅՈՒՂԱՅԻՆ

Մի օր մի գեղջուկ, ամառվա շոգին,
Էշն առաջն արած՝
Դաշառվ ու ձորով,
Քրտինք ծորելով,
Գնում էր ջաղաց:

Ու գնում էին ամառվա շոգին
Տերը հոգալի տակ,
Էշը բռնի տակ
Կըքած երկուսով:

Խրենց բախտից էր—ճամբու եղերքին,
Ծառերի միջով,
Անուշ կարկաջով
Հասում էր մարմանդ, ինչպես մի զեփյուռ,
Մի բյուրեղ աղբյուր:

Էշը՝ ներքեից, գյուղացին՝ վերից,
Անհադ խմեցին բարի աղբյուրից,
Խմեցին անվերջ, նորից խմեցին:
Ապա գյուղացին

Խշու վրայից բռնը դրեց վար,
Ու թողեց նրան ուղի մեջ դալար:
Ու ինքն ել պառկեց ծառի շվաքում,
Եվ մի թեթև քուն
Աչքերն ոքողեց:

Երբ խոնջենքն առած՝ աչքերը բացեց
Երկյուղած տեսավ, որ ճամբու ծայրին
Շատ կառկածելի երկու մարդ, զինված,
Ցցվեցին հանկարծ:

«Գողեր են», ասաց զեղջուկն ինքն իրեն
Ու ցատկեց տեղից. — «Էհ, իշու կտոր,
Շուտ արի, բեռը բառնանք ու փախչենք»:
— «Այսպես շտապով... Ի՞նչ պատահեց ար...
Կրակ է դառել երկիրնք ու գետինք.

Սպասենք քիչ էլ»:

— Գողեր են գալիս, այ էշ-ավանակ:
— Ինձ ի՞նչ գողերը: Թող դան, երթան էլ:
— Ինչպէս թե ինձ ինչ. հենց քեզ կտանեն:
Դեհ շուտ շուտ արա. չկա ժամանակ:
— Ինձ ի՞նչ՝ կա, չկա: Գնա քո բանին.
Ինձ համար մեկ է, ուր էլ որ տանին,
Իմ վրաս նորից բեռ են դնելու,
Հոգիս հանելու: Ի՞նչ ունեմ հիմա
Այս կեծ-կրակին հե-հե վազ տալու...

Պատասխան ավեց էշը զեղջուկին
Եվ տեղերի մեջ, ծառերի շուքին,
Թավալվեց զվարթ՝ կռնակի վրա:

1932—Փարիզ

ԱՔԼՈՐՆԵՐԻ ՎԵՃԸ

Երկու հոխորտան աքլորների մեջ
Մի կուտի համար թե մի վառեկի
Ծագեց այնպիսի դժնդակ մի վեճ,
Որ բանը հասավ դանակ-դանակի:

Ճիշ ու աղաղակ
Համլոցի դուան,
Աղմուկ ու ժըխոր
Աղբյուրի վլրա...

Կտցահարեցին իրարու կատար,
Բոսոր փետուրներ օդի մեջ թռան,
Հանջ ու պարանոց—մերկ, արյունլըվա:
Եվ դեռ հոսում էր արյունն անդադար—
Աքլորներից մին թափով կատաղի
Չարկեց ու կոտրեց թևը ոսոխի:
Եվ թևաթափը՝ պարտըված, նրկուն,

Փախավ, պահվռտեց
Մացառների մեջ,

Իսկ հաղթանակող աքլորը փքուն
Բարձրացավ բարձր մի պատի վրա
Եվ թափահարեց թևերը ցնծուն
Եվ երգեց գոռոզ՝ հաղթանակն իրա:
Բայց այդ միջոցին
Ահաբեկու մի ցին

Արսեց աքլորի կանչը սընապարծ,
Նհտի պէս սուրաց, իջալ ռըբարշալ,
Կորզեց հաղթողին, թըռցրեց տարաժ...

1935—Փարիզ

ԱՅՏՆ ՈՒ ԳԱՅԼԸ

Այժը կանգնել էր
Բարձր ու ապալեր
Ժայռի կատարին,
Իսկ ապարասում գայլը անդադրում
ձգնում էր, տքնում ժայռն ի վեր ելնել՝
Սակայն ապարդյուն:
Այժը վերևից
Սուր եղջյուրները ցլցած զայրագին՝
Խիստ ապառնալից
Ասում է գայլին.—
«Ա՛խ, դու սրիկա, ինչպես կուզեի
էս կտառշներս փոքրդ խրեի»:

Ինչքան թյուն տալով գայլը իր ձայնին
Պատասխանում է պարծենկոտ այծին.—
«Բա ե՞ս, սիրելիս, ինչքան երանի
հը առյի սրտանց էն օրհնյալ ժամին,
Որ կտառշներդ փոքրս լինեին»:

1929—Մաղկաձոր

ԱՂԲԱՏՆ ՈՒ ՔԱՐԱՎԱՆԸ

Շարվի շարան,
Ուղտերի ձիգ մի քարավան
Բեռնավորված հազար տետակ
Բարիքներով ու բերքերով,
Ապրանքներով մեծաքանակ,
Գալարվում էր ձորերն ի վար:
Եվ հյուսվում էր լեռներն ի վեր,
Եվ շարժելով զիլ ու զանգակ
Ծփծփում էր դոդանջելով,

Շարվի շարան,
Ծանրաբեռն մի քարավան:

Մի ձորի մեջ՝ խոր ու խավար,
Ուր ժայռերն պատ ու պատվար,
Ապառաժներ՝ բարձր ու լերկ,
Քարավանի վերա հանկարծ
Գրոհ տվին՝ դարան մտած՝
Ավազակներ սուսերամերկ:
Կողոպտեցին, ավար առան
Թանգարժեք բան՝ ինչքան որ կար —
Ոսկի, գոհար, լալ ու մարջան,
Մետաքս, ատլաս ծաղկանկար:
Աղիողորմ լալիս էին

Ճամբորդները պաղատագին...

Մինչդեռ այնտեղ,

Ավարառու աչքից լքված,

Մի աղքատ մարդ

Պարկը գրեց զլխատակին,

Պառկեց հանդարտ,

Սիրտը՝ անդորր

Ու մտմտաց իրեն մտքում.—

«Ասեւ է որ,

Փողի, զոռի այս աշխարքում

Անտուն անտեր աղքատ մարդ է/

Իր հանգիստ օրն ունեցել է...»

1932

ԿԱՔԱՎՆ ՈՒ ԱՂՎԵՍԸ

Կաքավը մի օր քարից քար անան,
Ցատկելով, խաղով ոտ դրեց հանկարծ
Քարերի միջին միամիտ քնած

Աղվեսի վրա:

Սոսկալի արկած:

Հազիվ մի վայրկյան,

Կաքավն աղվեսի գրկումն էր դաժան:

— Բախտն որ ուզենա,

Քնած տեղըդ էլ

Քո դուռը կգա:

Անոթությունից քուն էի մտել,

Բայց աստված հոգաց,—

Զվարթ քրքիջով աղվեսը ասաց:

— Ասածու ճամբրածն հմ, այդ լավ գիտեմ ես,

Դո՛ւ, աստվածընտիր, դո՛ւ, օրհնյալ աղվես,—

Երկյուղած ասաց կաքավը նրան.—

Նաև գիտցիր դո՛ւ,

Որ ուտել առանց ասածուն փառք տալու:

Մեծ մեղք է հոգուդ:

— Իրավ ես, անշուշտ,

Աղվեսն հավանեց, և ձեռներն իսկույն

Բարձրացրեց վեր և բազկատարած.—

«Փառքդ շատ, աստված...»

Աղոթքն ըսկեսց, հաղիվ սկսած՝
 Ջարմանքով տեսավ
 Ժայռի կատարին
 Կաքավը թառած՝
 Երգում է ուրախ,—
 «Շաղկիւն, կաղկիւն...»
 Ի՜նչ ծաղր ու ծիծաղ...
 Ջայռույթով լցված

Ազվեսը զարկեց գլուխը քարին՝
 Դառնաթիրտ ասաց.—
 «Տեղն է հիմարին,
 Թող քաղցած մնա:

Եվ աշխարհիս մեջ թող անիծվի նա,
 Ով գեռ չկերած՝ աստծուն փառք կտա»:

1932

Ա Ռ Ա Կ

(Աստվածաշնչից)

Ժողովեցան մի օր ծառ ու ծիլ բոլոր,
Որ իրենց համար ընտրեն թագավոր,
Շատ խորհուրդ արին ու դարձան ապա
Ասին ձիթենուն։—

— Եղի՛ր թագավոր, իշխի՛ր մեր վրա:
— Իմ ինչին է պետք,— ասաց ձիթենին,—
Ես իմ գործն ունիմ, չէ՞ որ ամենին
Մնունդ եմ բաշխում իմ պտուղներով:
Ես ինչպես իշխեմ իմ բարությունով:

Նորից խորհեցին ու դարձան ապա
Ասին թզենուն։—

— Եղի՛ր թագավոր, իշխի՛ր մեր վրա:
— Ո՛հ, ինձ հարմար չէ,— ասաց թզենին,
Ես հաճելի եմ, չէ՞ որ ամենին
Քաղցրիկ ու անուշ իմ պտուղներով:
Ես ինչպես իշխեմ իմ քաղցրությունով...
Խորհրդի նստան և խաղողենուն
Եկան դիմեցին:
— «Ի՛նչեր եք ասում,
Թողնեմ իմ գինին՝ ոսկի ու պայծառ,

Որ ցնծությունով լցնում է աշխարհ,
Զվարթ երգերով թնդում սար ու ձոր...
Ո՛հ, իմ բանը չէ՝ լինել թագավոր...

Երկար խորհեցին ծառ ու ծիլ բոլոր,
Որ չար տատասկին անեն թագավոր.
Ծառ ու ծիլ բոլոր հավաքված եկան
ե՛վ հեղ ու խոնարհ խնդիրքի կեցան.
— Եղի՛ր թագավոր, իշխի՛ր մեր վրա:
— Կըլնի՛մ թագավոր, և զբա համար
ի՛մ սուր վշերով ես շնա եմ հարմար.
Կը խոցեմ խորին, վա՛յ նրա օրին,
Ով չըհնազանդի իմ օրենքներին.
Եկե՛ք, թուփիս տակ մոռե՛ք ապաստան...
Առաջ, և սրեց փշերը դաժան...

1906—Ղազարապատ

ՀԱՃՈՒՅՔՆ ՈՒ ՄԱՆԸ

(Հայամաղուրդից)


Մի մարդ էր վախճում հողին բերանին՝
 Իր հեռեն ընկած ահեղ պապանից.
 Եվ վախճելիս նա ստների տակին
 Տեսավ մի խոր գուր, որի շրթունքից
 Մի թափ էր աճել անգունդի վրբա:
 Եվ գուրն իջավ նա՝ թուփից կախվելով.
 Ատները խրեց խորշերում նրա,
 Ու մի պահ զգաց իրեն ապահով:

Եվ երբ աչքերը նեակեց նա վերև՝
 Մտեղումով տեսավ, որ երկու մեծ մուկ
 Մեկը՝ սպիտակ, և մյուսը՝ սև,
 Փոխեփոխ կրծում, ուտում են ծածուկ
 Այն պալար թուփի արմատներն ամեն:
 Եվ սեղեց տեսնել հասակը գուրի,
 Մեր մկներն իրեն վար պիտի ձգեն՝
 Մաշկով հիմերն փրկարար թուփի.—
 Մարտափով տեսավ — մթին խոռոչում
 Մի գոման վիշապ, ահավոր, աճե,
 Ժանա երախը բաց, սև րոց է փնչում,
 Իսկ խորշերի մեջ, ստների ներքև,
 Գալարվում էին կծիկն իժերի,

Ձերանք շատով վեր էին սողում՝
Գարշապարները խայթելու խեղճի,
Ներ գարնաբանքից խիստ էին դողում...
Եվ երբ վերստին նայեց նա վերև,
Տեսավ այն թուփից ծորում են անուշ
Բեղբի կաթիլներ, և մարդը թշվառ
Կոպցրած ամեն փրկություն և հույս,
Սկսեց ծծել, ծծել անպաղար
Մորանքը մեղրի՝ քաղցր ու հմայուն:
Եվ այն ծծելով՝ անդուլ ու անհագ,
Մտապառվ խողով սարսափ ու սոսկում,
Իր բախար դժխեմ, գաղանին վայրագ,
Որ մոռնում էր իր գլխի վրա,
Մենկ վիշապին, որ բաց էր փնջում,
Փահրոտ իժերին, մկներին ազահ...

Այս թշվառ ոգին՝ կախված անկայան՝
Կյանքի—մահի մեջ, ով մարդ, այդ մենք ենք,
Իսկ գաղանն անեղ—կարեքն է դաժան,
Եվ այն դուրը մռթ—աշխարհն է անելք.
Իսկ մկներն ազահ՝ գիշերն ու ցերեկ,
Ռանք կրծելով տալիս են իրար
Մեր կյանքի թերին և ուտում մեկ-մեկ.
Կծիկն իժերի—ցավերն անհամար,
Ախտ, հիփանդություն՝ մեր շուրջը հավերժ,
Իրենց թույները թափում են մեր մեջ:
Եվ վիշապն անեղ—մահն է, գերեզման,
Մթնում դարանած և երախը բաց,
Հոգառում է մեկ վաղ թե անաղան.
Իսկ թուփը կյանքն է անհիմն և ունայն,

Որ ըողբոջում է անդունդի վրա.
Եվ մեղրը անուշ—հաճությամբ է նրա.
Որով արբեցած մոռանում ենք մենք.
Աշխարհն անավոր, մեր լախտը դժնյա.
Յաֆն ու ժամանակ, գերեզման ու մահ:
1910 — Դադարապատ



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Քաղցած հավը	3
2. Մոլլան ու մանուկները	4
3. Սատանան և իր ազջիկները	5
4. Կյանքից թանգ բանը	7
5. Արջն ու օձը	9
6. Թագավորից փախչողը	11
7. Մի հարցում	13
8. Մարդն ու տարերքը	14
9. Վարագն ու ազվեսը	15
10. Էջն ու գյուղացին	16
11. Աքլորների վեճը	18
12. Այծն ու գաջը	20
13. Ազքատն ու բորավանը	21
14. Կաքամիւ ու ազվեսը	23
15. Առակ (Աստվածաշնչից)	25
16. Հաճույքն ու մահը	27

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԲԱՇԽԱՆ
(ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԱԶՄԱՅԻՆ
ԳՐԱԴԱՐԱՆ, ԵՐԱՅԵՆ, 1916)

ՎՋ 12643 Պ. 745: Տիրած 7000 2 ապ. մաս:

Ստորագրված է ապ. 20 /XII 16 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԱԶՄԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆԻ ՍՏԱՆԻՍԼԱՎ ԿՐԹԱՆԻ ԿԵԼԵՑ ԳՐԱԴԱՐԱՆ. ԵՐԱՅԵՆ, 1916

Ձ 3 տպարան, Երևան, 1916

АВ. ИСААКЯН
Б А С Н И
(На армянском языке)
Армгиз, Ереван, 1946

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԽՈՐՀԱՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ
ԵՐԵՎԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆԻ ԿԱՌԱՐԱԿՈՒՄ
ԵՐԵՎԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆԻ ԿԱՌԱՐԱԿՈՒՄ
ԵՐԵՎԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆԻ ԿԱՌԱՐԱԿՈՒՄ

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



220028074

112.

ԳԻՆԸ 3 Ո.

